


ԿԱԼԱՆԱԻՈՐ ՕԴԱՊԱՐԻԿԸ

✽ ✽

Արդի պատերազմներու մէջ՝ հրետանի-
ներու ամենամեծ ազդեցութեանց վրայ՝
շահագրգռող յօդուածներ ստեպ լրագիր-
ներու մէջ կը կարդացուին, հետեաբար
ամէն ոք ըիչ շատ գիտէ թէ ինչպէս թռն-

կրնան մատուցանել, և պատերազմի տա-
ցած ժամանակը նաեւ միջակ տրամաշա-
փով հրանոթներն ալ գործ կը տեսնեն.
սակայն խոշոր թնդանոթները՝ որոնք մաս-
նաւոր խոռոչներու մէջ պատասպարուած և
կամ զրահապատ դիրքերու մէջ խնամքով
ներփակուած կ'ըլլան, այդպիսի վայրերուն
թնդանոթաձիգները մինչև որ դիտարանէ
մը տրուած նշաններուն չի համակերպին



Դտալական վիշապագումդի մը վերամբարձումը՝ Թշմամիի շարժումնիր լրտեսելու համար:

դանոթաձիգ զօրականները արթնուն և սրա-
տես աչքեր ունենալու են՝ որպէս զի ան-
միջապէս հետաւոր մարտկոցներու ընկե-
րակիցներուն մատնանշեն՝ թշնամի զօր-
քերու և հրետանիներու շարժումները և
դիրքերը, և ասոնք ալ իրենց թնդանոթ-
ներու բերաններն ուղղելով այդ կողմերը՝
ճշգրիտ նշանակուած ումբեր տեղացնե-
լով՝ չէզոքացնեն կամ փճացնեն սպառ-
նացող հակառակորդները:

Այսպիսի կարևոր ծառայութիւններ՝
միայն փոքր տրամաշափով թնդանոթները

և չուղղեն հրանոթներու բերանները՝ ան-
կարելի կ'ըլլայ նպատակակէտի մը վրայ
անվրէպ տեղացնել մահացուցիչ ումբեր:

Քիչ շատ ամէնուն ծանօթ է աս ալ թէ
ինչ տեսակ տարօրինակ բարձր կայաններ
կամ դիտարաններ գոյութիւն ունին: Գի-
տենք որ մասնաւոր պաշտօնեաներ արթ-
նութեամբ կը հսկեն բարձր ժայռերու, ա-
մայի շէնքերու, զանգակատուններուն, ծխնե-
լոյգներու վրայ և երբ ասոնք պակսին՝
բարձր ծառերու զագաթներէն զինուորա-
կան ղէտեր՝ հեռախօսով, կամ հեռագրով,

կամ արեազրով, կամ նշանաձևերով՝ ստէպ (թշնամիէն առանց տեսնուելու) նշանացի կ'իմացնեն և կը ղեկավարեն հրաձիգ զօրականները՝ իրենց թնդանօթներուն հարուածները ճշդիւ ուղղելու և հասցնելու թշնամեաց գունդերուն և մարտկոցնեւրուն վրայ:

Սակայն երբ ռազմավայրը հարթ հաւասար դաշտագետին մ'ըլլայ, այն ա-

Գերմանացիք ինչպէս պատերազմական ամէն հնարքներ կանխամտածած էին, յայտ ևս գերազանցօրէն նախատեսած և գործնականի վերածած էին՝ թշնամի բանակները և ամրոցները, արծուարար բարձրէն դիտելու, մանաւանդ փրանսան՝ որ օդանաւորդութեան որորան և հայրենիքն էր և պատերազմէն առաջ զնտած և օդապարիկներ կը գործածէր իբրեւ կալանաւոր



Աստորիական կալամաւոր օդապարիկի մը գետնի իջնելը.


տեն, թռչող գործիներէ զատ, կալանաւոր օդապարիկներ գործածել հարկ կ'ըլլայ: Դիւրին է երեակայել թէ ինչպիսի մեծ ծառայութիւններ կը մատուցանէ այսպիսի օդապարիկ մը՝ որուն մակույկին մէջ բազմած զէտը՝ հակառակորդ թշնամիին ամէն դիրքերը որոշ տեսնելով՝ իսկոյն պէտք եղած կողմեր լուրեր կը հազորդէ՝ հրետանիներուն բերանները և ուրիշ ահաւոր գործիները ուղղելու աննշմարելի արիւնքաններուն կենդանութիւնը:

բարձրադէտեր. Գերմանիան՝ ինչպէս նաև Իտալիան՝ երկայն գլանաձև օդապարիկներ գործածելուն համար draken (վիշապ) անունը տուաւ՝ որուն ձևին համար ֆրանսացիք saucisse (երշիկ) անունը տուին, որ է ըսել օդապարիկ երշիկաձև:

Մեր պատկերները արդէն կը ցուցնեն սոյն օդապարիկներուն արտաքին ընդհանուր և իսկատիպ ձևը: Փորձառութիւնը ապացուցած է որ ասոնք զնդած և օդապարիկներէ բաւական ծառայութիւն

կը մատուցանեն, որով գրեթէ ամէն զօրա-
բանակներ զայս նախընտրելով՝ այժմեան
պատերազմի ճակատներուն վրայ մեծ քա-
նակով կը գործածուին: Գնդաձև օդապա-

գնդաձև օդապարիկը՝ երբ սաստիկ հովի մը
շնչումին ենթարկուի՝ իսկոյն վերէն դէպ
ի վար կը մղուի երկվայրկեանի մը մէջ
8էն 10 մեդր երազութեամբ:



Դիտարկած վիշապագումը մը Թրէմթոյի մէջ թշուաժի շարժումները
դիտելու ատեն, ամփիֆեր կը շարունակէ գործողութիւնները՝ միմիջեւ
չօրս կողմը թշուաժի մշանառութեամբ գնդակները կը պայթին:

րիկներէն սա առաւելութիւնն ևս ունին՝
որ ասոնք, երբ օդոյ մէջ մէյ մը որ կը
բարձրանան, այլևս հոն կարծես հաստատուն
յենակէտ մը կ'ունենան և այդ յենակէ-
տին շուրջը հովի փշումին համեմատ ինք
իրենց առանցքին վրայ կը շրջին: մինչդեռ

Արդ՝ ըսածներէս կը հետևի որ այս
վիշապաձև կամ երշիկաձև օդապարիկնե-
րը՝ թշնամի քանակները և անոր շարժում-
ները դիտելու համար գերազանցապէս ըն-
տիր միջոցներ են: Այսպէս, օրինակի հա-
մար, իտալական ռազմաճակատին կողմը՝


իզոնցոյ գետի երկայնքէն մինչև Մօնֆալ-
քօնէի սահմանները և Աղբիականի եզեր-
քը, հորիզոնէն վեր բարձրացած իբրև
արթուն պահանջողներ՝ օդոյ մէջ սլացած
կը տեսնուին զորշ կամ պողպատազոյն
պատատներով՝ կալանաւոր օդապարիկները,
որոնք ստուգիւ թնդանօթածիգ զօրաբա-
նակներու վերէն դիտող աչքերն են ։
Այս բազմաթիւ օդային դիտարաններու
մակոյկներուն մէջ կը գտնուին գիտակից
սպաներ՝ որոնք ճանդհատ որոշեալ նշան-
ներով և հաղորդակցութեան միջոցներով՝
թշնամեաց բանակներուն ամենափոքր շար-
ժումները կը տեսնեն, անոնց հրետանի-
ներու վայրերը կը բնորոշեն և իսկոյն
պատկանեալ հրամանատուութեանց լուրեր
կը փութացնեն, ու վճռական և ազդու
հակազդեցութիւններու սկիզբ և ղեկավա-
րը կ'ըլլան ։

Մոմօի վրայ՝ ֆրանս-անգլիական յար-
ձակումներու ժամանակ ձեռք բերուած ա-
ռաւելութեանց մեծագոյն ազդակներէն մին
ալ, դաշնակիցներուն՝ գերմաններէն շատ
աւելի կալանաւոր օդապարիկներ ունե-
նալն եղաւ ։ Միևնոյն ատեն ֆրանսական և
անգլիական սաւառնակներ՝ յանդուգն յար-
ձակումներով գերմանական կալանաւոր օ-
դապարիկները կ'ոչընչացնէին ։

Դիւրին է երեւակայել թէ՛ որքան մեծ
զոհողութեանց և տաճնապնելու կ'ենթար-
կուին կալանաւոր օդապարիկի ղէտերը՝
որոնք երկրիս և երկնքի մէջ կախուած՝
ոչ միայն օդոյ ծայրայեղութեանց, սառ-
սրտեցուցիչ ցուրտի և շնիկ աստիճան զարհու-
րելի տաքութեանց պէտք են համբերել,
այլ նաև թշնամի օդառումներու հրահա-
րուածներու և սաւառնակներու նշանառու-
թեանց ենթակայ ըլլալով, կենաց և մա-
հու տաճնապնել պէտք են անցնել ։ Հոն
ստէպ ղէտերը օդոյ տարապայման փոփո-
խութեանց ու ծածանումներու ատեն սիրտ
խառնուրդի ալ կը բռնուին, և նեղ մա-
կոյկին մէջ կարկամեալ մնալով՝ կը շա-
րունակեն խուզարկութիւններ ընել՝ և
հեռախօսով լուրեր հաղորդել ։

Պատերազմի դաշտերուն վրայ բարձր

կեցած կալանաւոր օդապարիկի զօրական-
ները, իսկապէս առաջին նպատակէտը
կ'ըլլան թշնամիներու հրազէններու հա-
րուածներուն, Եւ սակայն՝ բանակներու
մատուցած ընտիր ծառայութեանց համար՝
անհրաժեշտ է ոչ միայն եղած կալանա-



Մատնակ մը յարձակում կը զործէ վիշա-
պագութեան մը վրայէն, ծախակողմը կը տեսնուի
դիտող սպային անկարգելով վար իջնել, թշնա-
մին հարուածներէն ազատուլու համար ։



Հրդեհը Յշամ է յամդուգմ վիշապագունդի մը վախճանները

ւոր օդապարիկները պաշտպանել՝ այլ նաև ժամանակի պահանջմանց համեմատ տեղափոխել զանոնք:

Կալանաւոր օդապարիկ մը ուռնցնելու, վրան հսկելու, վերամբարձնելու կամ տեղափոխելու համար՝ պէտք կ'ըլլայ 180 հոգիներու ձեռնտուութեան և տասնեակ մը ինքնաշարժ կառքերու միջամտութեան:

Նյախ և առաջ ինքնաշարժ մը պէտք է՝ կալանաւոր օդապարիկին պարանը ամփոփելու կամ արձակելու համար: Այս պարանը պողպատէ թելերու հիւսուածք մըն է՝ մատի մը հաստութեամբ և 300 քիլոկրամ վերցնելու զիմացկունութեամբ, որ հաստ կարժառի մը վրայ կը փաթթուի: Պարանի կեդրոնը պղնձէ կղզիացած բարակ թել մը կայ՝ որ ընկալուչ և հաղորդիչ հեռախօսներու հետ կցուած է և ասով՝ օդոյ մէջ առկախ մակոյկի պաշտօնեան՝ կը խօսի ստորև գտնուող ինքնաշարժի մէջի պաշտօնէին հետ՝ որ իսկոյն լսածները կը հաղորդէ պէտք եղած հրամանատարներու: Հարկ չկայ ըսել՝ թէ օդապարիկը վեր բարձրացնելու կամ վար քաշել իջեցնելու համար՝ պարանը զօրաւոր մեքենականութեամբ կարժառի վրայ կը փաթթուի կամ կ'արձակուի: Երկրորդ ինքնաշարժ կառք մը՝ կը փոխադրէ դէտին մակոյկը և ուրիշ պարաններ, և հակադարձ կոնքեր՝ որոնք երշիկին տակէն իբրև թռուցիկի պոչ կը կախուին և կը ծառայեն հովի առնն օդապարիկին ըստ կարելոյ զազաթնահայիաց դիրքի մէջ կեցնելու համար: Յաջորդ ինքնաշարժերու մէջ զետեղուած կ'ըլլան այն կարեւոր գործիները՝ որոնք կալանաւոր օդապարիկի կայարան հաստատելու ծառայող, հեռախօսական տնակը, հակաբեռի տպրակները, ջրային կազ պատրաստելու խողովակները, և այլ իրեղէններ կը բովանդակեն:

Բոլոր այս գործողութիւնները հարկ է որ արտաքոյ կարգի արագութեամբ տեղի ունենան, քանի որ թշնամին հազիւ թէ կալանաւոր օդապարիկի մը վեր բարձրանալը տեսնէ՝ իսկոյն անոր վրան ռումբեր կը տեղացնէ, օդաչու սաւառնակներ կը

փութացնէ՝ որոնք գնդակացիներն և կի-
զիչ ռումբեր (bombe) վրան տեղացնե-
լով, կը ջանան հրդեհել կամ զգետնել կա-
լանաւորը և սպաննել ղէտերը:

Հեռախօսական խցիկը կը ծառայէ նաև
իբրև շարժական պաշտօնատեղի և գոր-
ծատուն և իրեն մէջ կը պարունակէ այն
ամէն կարևոր իրերը և գործիները, ինչպէս՝
հաղորդակցութիւն հաստատելու կայարան-
ներ, հազարաւոր մեղր թելեր, բաշխման
ըրջանակներ և ելեկտրական զանգակներ,
որոնք ափյափոյ լրատուութեան գիծեր
շինելու համար հարկաւոր են. որով այդ
խցիկին պաշտօնն իսկապէս կ'ըլլայ միու-
թեան կեդրոնատեղի մը ընդմէջ կալանաւոր
օդապարիկի ղէտին և հրետանիներու և
մարտիկոցներու հեռաւոր հրամանատարու
թեանց հետ. որոնք ստէպ ո՛չ թշնամի և
ո՛չ կալանաւոր օդապարիկ կը տեսնեն: Եւ
սակայն մակոյկի սպանները սոյն ռճով
ուղղակի կը բանակցին թնդանօթածիգնե-
րու հետ, և անոնց արձակած հարուածնե-
րը կը զեկավարեն. կռուի ատեն ղէտին
ամենէն աւելի ջղազգոգող զբաղանքը այս
կ'ըլլայ՝ մանաւանդ երբ շարժական գուն-

դեր կամ կառքեր հարկ կ'ըլլայ յանկար-
ծակի բերել:

Այսպէս ուրեմն, կալանաւոր օդապա-
րիկը թնդանօթածիգ զօրագունդին յարգի
և անհրաժեշտ աչքը կը ձեռնցնէ, աչք
մը որ ի հարկէ թշնամիին ատեղութիւնն
և վրէժխնդրութիւնը կը գրգռէ՝ որով ան-
ընդհատ գնդակներու նպատակակէտ մը
կ'ըլլայ. բայց միեւնոյն ատեն ինքն ալ
կը դիտէ և կը հարուածէ՝ զթշնամին:

Արդ՝ պատերազմիս պահանջը այս է.
ամէն բանի մէջ ծայրայեղութեան զիմեւ,
ճգնիլ բռնել անըմբռնելին, յաղթելու...
կամ մեռնելու համար:

Յայսմ ևս գիտութիւնը յառաջադիմած
է, բայց միայն կործանելու, սպաննելու
համար, և մշտ մարդս՝ դեռ աւելի ատե-
լի դարձնելու հանդէպ ուրիշ մարդու:

Նիւթական յառաջադիմութիւն, որ զմարդ
իւր նպատակին չի մօտեցներ, այլ կերպով
մը զինքը կը հարկադրէ՝ նոր գիտներով
նոր ձեռնարկներով, նոր յանդգնութիւն-
ներով՝ հին բարբարոսութիւններու դառ-
նալ և անոր մէջ սնունդ գտնել:

Հ. Ն.

Տ Ե Ր Ե Լ

Գետնին վրայ ինկած թողլիք կը տեսնեմ
Տրմոյն տերեւ մը գունամափ, ազագուն.
Կը հեռիւնայ, կը սարսուռայ դողդոջուն
Կու լայ կեանքին հէք վայրկեանները դժխեմ:

Անցեալի քաղցր յուշերն իր մէջ կ'արժեւորան,
Նա կը ճըգնի, կը ջանայ դեռ ապրելու:

— Ամբարըշտին պատկերն է դա ողբերգու,
Անոր խրդճի խայթերն ալ իր տանջարան:

Լոգան. 20 Դեկտ. 1916

Ճիրաբը

Ա. Ղազարու կողեկիս եւ Միփմարեան
Միաբանութեան նուիրական հանդէսներու
մէջէն հազուադէպը եւ հոգեզմայլը՝ Ար-
հիապատիւ Արքեպիսկոպոս Սարգիս Բա-
ճեւադրեան ըլլալով, վաղեմի սովորութեան
հասկումով սոյն օրուան մատնանքներու եւ
իղծերու յորդուածիւնը, գրական արտաբոլ-
թիւններով եւս անմահացնելու դիտաւո-
րութեամբ, գրքոյկներ եւ տաղաչափեալ ու-
ղերծներ եւս կը տպագրուին ու կը բաշ-
խուին հանդիսականաց: Այդպիսի գրու-
թեանց իբրեւ նմոյշ կը գետնողնք «Բազ-
մալէպի էջերուս մէջ հետեւեալները.

ԽՄԲ